№ 120 ԵՐԵՔՇԱԲԹԻ 4 ՅՈՒՆԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 4 ՅՈՒՆԻՍԻ № 120

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

# ՄՇԱԿ

ԽՄԲԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԻՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:
Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.
1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ստեփան և Մկրտիչ Յարութիւնեան Քիւրքճեանները, Մարիամ Յարութիւնեան Գազանճեան իր որդկերանցով, Ստեփան և Սրբուհի Դուլթեանները յայտնում են իրանց սրտագին շնորհակալութիւնները բոլոր այն յարգելի անձանց, որոնք իրանց ներկայութեամբ, հեռագրով և նամակով յարգեցին իրանց անմոռանալի եղբօր և քեռորդու՝ նորոգ հանգուցեալ

Յովհաննէս Յարութիւնեան ՔԻՒՐՔՃԵԱՆԻ

461. յիշատակը: 1—1

ՀԱՒԼԱԲԱՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

Չորեքշաբթի, յունիսի 5-ին, ակումբի ամառային շէնքում կը կայանայ

ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՈՒԱՆ

I

Սայաթ-Նովայի երգերը կերգեն Աշըղ-Հավեր իր խմբով և ընկերներով:

II

Նոյն խումբը կը կատարէ արեւելեան երգեր և եղանակներ, սօլօներ և խմբական:
ՅԱՏՈՒԿ ԱՅՍ ԵՐԵԿՈՅԹԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԵՆ ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐ ԵՐԳԵՐ:
Յաւուր պատշաճի խօսք կասեն և Սայաթ-Նովայի երգերից կարտասանեն պ. պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ, ՆԻԿ. ԱՂԲԱԼԵԱՆ, Վ. ՎԱԼԱԴԵԱՆ և ուրիշները:

III

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՐԵՐ ՀԻՆ ԹԻՖԼԻՍԻ ԶԳԵՍՏՆԵՐՈՎ

Բեմը զարդարված կը լինի արեւելեան զգեստներով:
Ակումբի խորհուրդը խնդրում է հասարակութեան՝ ով կարող է ՇՆՈՐՀ ԲԵՐԻ ԵՐԵԿՈՅԹԻՆ ԹԻՖԼԻՍԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՎ:
Հիւրերի մուտքը՝ տղամարդկանց ՄԷԿ րուբլի, կանանց 50 կոպ.:
Երեկոյթի սկիզբը ժամը 9-ին:
աու. 462. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

ԱՅՍՕՐ, երեքշաբթի, յունիսի 4-ին

Ընտանեկան երեկոյթ

Ղեկավարութեամբ ազատ գեղարուեստագէտ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԻՆԱՍԱՐԻ և մասնակցութեամբ սօլիստ-վիօլօնչելիստ Ս. ՇՊԻԼՄԱՆԻ տեղի կունենայ:

I ՍԻՄՖՕՆԻԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ

ԿԸ ՆՈՒԱԳՎԵՆ. — Բեթհովէնի 5-րդ սիմֆօնիան, Վագների օպ. ներածութիւնը՝ Լօէնգրին, Սկրեաբին, «Reverie» Չայկօվսկիի, վարիացիաներ վիօլօնչէլի համար, «Րօկօկօ» Սվէնդսէնի, «Պարիզեան կարնավալ»:
Սկիզբը երեկոյեան ժամը 9-ին:
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ վճարում են մուտքի համար՝ տղամարդիկ 50-ական կոպէկ, կանայք և ուսանողները 25-ական կոպ.:

ԲԺԻՇԿ

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ

Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:
Հասցէն՝ Ռտիշչէվսկայա № 1.
աու. (և.հ.կ.) 4. 100—62

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. Յ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ

(Նախկին օգնական Նամայեվի)
Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը
Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—1½-ը և երեկ. ժ. 4—7-ը
Վելեամինովսկայա փողոց № 4, բն. 3.
աու. (օ.մ.) 129. 50—42

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

### ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆՈՐ ԹԱԿՐԻՐԸ ՄԵԾ ՎԷԶԻՐԻՆ

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը մայիսի 18/31-ին հետեւեալ թակրիրն է ներկայացրել մեծ վէզիր Մահմուդ-Շէվքէթ-փաշային.

Ձերդ բարձրութիւն.

Ձեր բարձրութեան ներկայացնելուց յետոյ այն յիշատակագիրը, որի մէջ բացատրված է Արեւելեան Անատօլիայի վիլայէթներում և Կիլիկիայում ապրող հայերին սպառնացող կոտորածների վտանգը, մինչև այսօր ոչ մի միջոց ձեռք չառնվեց՝ ընդունակ պաշտպանելու մեր ազգակիցներին այդ կորստից. կոտորածների դրդիչները ոչ մի պատասխանատուութեան չենթարկվեցին. այն հարստահարիչ գործունէութիւնը, որ ցոյց են տալիս պաշտօնեաները միայն հայերի վերաբերմամբ, ամենադոյզն չափով անգամ չէ թուլացել:

Ընդհակառակը, վստահութեան արժանի տեղեկութիւններ, ստացված վերոյիշեալ երկիրներից, ցոյց են տալիս, որ վտանգը՝ մեծացել է, և կարելի է ասել, թէ առանձնակի սպանութիւնները, յափշտակութիւնները և կողոպուտները, վերցրած իրանց ամբողջութեան մէջ, ունեն—ամեն մի համեմատութիւն պահպանված — կոտորածի բնաւորութիւն:

Եւ պատիւ ունեմ յանձնել ներփակեալ ձեր բարձրութեան, արձանագրված նոր ոճիրների մի պատկեր:

Վերոյիշեալ տեղեկութիւններից երեւում է նոյնպէս, որ դժբաղդ հայ ժողովուրդը, սպառնացված, մի կողմից, ջնջվելու և, միւս կողմից, ենթակայ պաշտօնեաների բռնապետական, անտանելի ճնշման, ընկել են աննկարագրելի անհաբեկման մէջ: Երկրագործները չեն համարձակվում դուրս գալ գիւղերից՝ գնալու և իրանց դաշտերը հերկելու. Ժողովրդի միւս դասակարգերը նոյնպէս չեն կարողանում զբաղվել իրանց գործերով: Բացի դրանից, հայերի մի մասը փրկութեան ուրիշ ելք չը գտնելով, քան գաղթականութիւնը, խմբերով ինչպէս հին ըէժիմի օրով էր, ձեռք են առնում պանդխտութեան ցուպը:

Այս դրութիւնը ցոյց է տալիս, որ հայերը այլ եւս իրաւունք չունեն ապրելու օսմանեան կայսրութեան մէջ:

Որովհետև իրերի այս դրութիւնը պէտք է հետեւանք ունենայ հայ տարրի ջնջումը վերոյիշեալ երկիրներում, և կառավարութեան բազմապատիկ հաւաստիացումները այն մասին, թէ միջոցներ են ձեռք առնված երաշխաւորելու մեր ազգակիցների պատիւը, կեանքը և գոյքը, դեռ ոչ մի արդիւնք չունեցան և այլ եւս ոչ մի բան չէ մնում աւելացնելու այն աղերսներին, գանգատներին և բողոքներին, որ ես լսեցնել տուի մինչև այսօր, ուստի ինձ մնում է միայն կոչ անել, հայ ժողովրդի վիճակի համար — ժողովրդի, որ ընկերութիւնից արտաքսված է—օսմանեան պետութեան և ժողովրդի խղճմտանքին և պատասխանատուութեան և քաղաքակիրթ աշխարհի գթութեան:

Թիւրքահայոց պատրիարք՝
Արշարունի արքեպիսկոպոս

Այս բողոքին կցված է ցուցակը սպանութիւնների, աւարառութիւնների, առեւանգումների և այլ ոճիրների, գործված՝ Անատօլիայի զանազան վիլայէթներում 1913 թ. ապրիլի 29-ից ի վեր:

### ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Լոնդօնում ստացվել է Ռուսաստանի պաշտօնական նօտան, որն առաջարկվում է մեծ պետութիւնների դեսպանաժողովի քննութեան Կ. Պօլսում: Համաձայնելով Հայաստանում անգլիացի հրահանգիչներ ուղարկելուն, Ռուսաստանը դրա միակ պայման դնում է բոլոր վիլայէթներում ամենայն բարենորոգումներ մտցնելու անհրաժեշտութիւնը:

—

Կ. Պօլսից հեռագրում են ֆրանսիական լրագիրներին, որ Գերմանիան նորանոր արկածների է ձգտում, որպէսզի Թիւրքերի աչքում վարկաբեկէ Ռուսաստանի այն հաղորդագրութիւնը, որ հրատարակվեց Փոքր Ասիայում գործադրվելիք բարենորոգումների մասին:

—

Պետերբուրգից, Պետական Դումայի պատգամաւոր Միք. Պապաջանեան հեռագրում է մեզ, որ արտաքին գործերի մինիստրութեան նախահաշւի քննութիւնը (որի ժամանակ կարող է խօսք լինել և հայկական հարցի մասին) Պետական Դումայում կը կայանայ այսօր, երեքշաբթի, և արտաքին գործերի մինիստրի հանդէս գալը բացատրութիւններով, որ առաջ փոխված էր, այժմ կարող է տեղի ունենալ:

—

Մենք ստացանք հետեւեալ հեռագիրը Պարիզից.

«Պարիզի հայկական կօմիտէն արտայայտում է իր ջերմ երախտագիտութիւնը պ. Օլգենինին նրա վեհանձն արշաւանքի մասին ի նպաստ հայկական հարցի:

«Յանուն կօմիտէի՝ Արշակ Չօպանեան»:

### ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 20 մայիսի

Հեռագիրը նորից գոյժեր է բերում Շատախից: Ամսիս 15-ին, քիւրդ յելուզակներ յարձակվել են Շատախ գաւառի Գարիզամ և Քրմնից անունով հայ գիւղերի վրա և օր ցերեկով յափշտակել ու տարել են 200-ի չափ անասուններ, սպանել են մի հայի, իսկ նրանց հետապնդելու նպատակով ուղարկված զինւորները նստած են գաւառում:

Անցեալ նամակներիցս մէկում գրել էի, որ ամսիս սկիզբներին Խումար և Կաճետ հայ գիւղերի 2000-ից աւել ոչխարներն էլ յափշտակվեցին ու երկու կաճեցիներ սպանվեցին. այդ դէպքից երկու օր անցած՝ կառավարութիւնը մարդիկ է ուղարկում քննութեան, որոնք, չը նայած որ իրանց հետ 30-ից աւելի զինւորներ են ունեցել, չեն համարձակվել լեռը բարձրանալ դիակների վրա քննութիւն կատարելու ըստ օրէնքի, այլ հրամայել են գիւղացիներին, որ իրանք լեռը գնան ու դիակները բերեն գիւղը՝ քննութեան համար: Երբ գիւղացիները բողոքում են, մատնանշելով որ նրանց պարտականութիւնն է քննութիւնը կատարել ոճիրը կատարված տեղի վրա, քննիչները զայրացած վերադառնում են առանց դիակները տեսնելու և քննութիւն կատարելու, մինչև որ գիւղացիները մարմինները թաղելու համար գիւղը բերելիս՝ քմինչ պաշտօնեաները նորից գալով իրանց պարտքը կատարում են: Սա հեգնանք չէ միթէ. այսպիսի պաշտօնեաներ, որոնք իրանց կաշուց այսչափ վախենում են, միթէ կարող են արդարութիւն և խաղաղութիւն հաստատել երկրում:

Խումար գիւղից յափշտակված 1100 ոչխարներից 87-ը երեւի մօտակայ քիւրդ գիւղերին բաժին հասած լինելով, նրանք մի քանի օրից յետոյ՝ երկիւղ կրելով անշուշտ խռովութիւնը յայտնվելուց՝ գիշերով այդ ոչխարները քշում են հայ գիւղի սահմանները, իսկ 900-ը կառավարութիւնը ձեռք է բերել Ջիւլամէրիկ գաւառում, այսինքն իբր չորս օրվայ ճանապարհ հեռու Շատախից և յայտնել է, տէրերին, որ գնան իրանց գողօնը վերադարձնելու:

Մտրակ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ

—օ—

### ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ *)

(Առաջնորդող յօդուած «Новое Время» լրագրի)

Բաւական է ընդունել մեր առաջ բերած հիպօթէզի կանոնաւորութիւնը, և Թիւրքահայկական յարաբերութիւնների ամբողջ պատմութիւնը վերջին 30 տարվայ մէջ կը ներկայանայ մեզ իբրև լօգիկական զարգացումն մի հիմնական դատողութեան: Հայերը գրաւում են Թիւրքական տիրապետութիւնների սիրտը Փոքր-Ասիայում. մինչև որ չը խորտակվի նրանց ընդդիմադրութիւնը, ասիական վիլայէթների ապագան ապահովված չէ լրջօրէն: Հայ ժողովրդի դէմ մղված կռիւը բացատրում է այն հողային քաղաքականութիւնը, որ ձգտում է խլել նրանց անշարժ կալուածները. բացատրվում է ֆինանսական քաղաքականութիւնը, որ յայտնապէս ուղղված է հայերը սիստեմատիկ կերպով աղքատացնելու. բացատրում է, վերջապէս, հայերի վրա գործված այն կազմակերպված յարձակումները, որոնց ժամանակ փչացան տասնեակ հազար հայեր:

Ռուսական քաղաքականութիւնը չէ կարող հաշւի չառնել մեր վերև ցոյց տուած հիպօթէզան:

Դիպլոմատիան ի հարկէ կը սկսի զարգացնել այն իդէան, թէ ամեն մի միջամտութիւն հայկական գործերի մէջ, եթէ նա կատարվի եւրոպական գործակալների ակտիվ մասնակցութեամբ, «կը վիրաւորէ» սուլթանին և «կը խախտէ» նրա վեհապետական իրաւունքները: Դիպլոմատիան երեւի կը պնդէ նրա վրա, թէ պէտք է «խնայել» օսմանեան իշխանութիւնների ինքնասիրութիւնը. դրան համաձայն, պէտք է ենթադրել, կառաջարկվեն պալիատիվներ, որոնց նպատակը կը լինի Թիւրք պաշտօնեաների ձեռքով րէֆօրմներն իրագործել: Եթէ վերոյիշեալ բացատրութիւնը համապատասխանում է իրականութեան, բոլոր այդպիսի սանտիմենտալ արգումենտները պէտք է համարվեն արմատականապէս սխալ:

Հայ ժողովրդի վերածնութիւնը վնասակար է Թիւրքաց պետութեան շահերին: Րէֆօրմները հայկական վիլայէթներում վարկաբեկում են Թիւրքական Փոքր-Ասիայի զարգացումը պանթիւրքիզմի ոգով: Եթէ մենք աւելացնենք նաև, որ ցոյց տրված այս երկու ճշմարտութիւնները լաւ և վաղուց յայտնի են Թիւրքիային, այն ժամանակ եզրակացութիւնը ինքն իրան կը կատարվի: Հէնց որ րէֆօրմները յանձնվեն Թիւրքաց իշխանութիւններին և, մանաւանդ, եթէ այդ րէֆօրմները լուրջ լինեն, օսմանեան կառավարութեան ամբողջ գործունէութիւնը կուղղվի երկու նպատակ ձեռք բերելուն. առաջին՝ ձեռք կառնվեն դիմակաւորված միջոցներ նրա համար, որ նորամուծութիւնները վարկաբեկվեն. երկրորդ՝ հայերին ջնջելու տակտիկան կուժեղացվի և կը զարգացվի, ի նկատի ունենալով Թիւրքիայի համար ծագած սուր վտանգը: Եւ որքան շատ պնդեն մեծ պետութիւնները րէֆօրմների իրագործման վրա, այնքան շատ ամեն մի Թիւրք, որ իր հայրենիքի բարիքն է ցանկանում, պէտք է ճնշէ և փչացնէ հայերին:

Հետեւաբար կը ստացվի միեւնոյն պատկերը, որն այնքան երկար տարիների ընթացքում տեսնվում էր Մակեդօնիայում: Րէֆօրմների փառապանծ դեկօրացիաների ետեւից առաջ է տարվելու վարագոյրի ետեւից ատելութեան և չսպառ բռնութիւնների աշխատանքը: Այդպիսի դրութիւնից միայն մի ելք կարող է լինել: Պէտք է, որ դիպլօմատիան դէն ձգէ ամեն մի կեղծաւոր ֆրազէօլօգիա: Պէտք է, որ նա իմանայ և ճանաչէ այս Թէզիսը. —Հայերի վերածնութիւնը կատարվում է ոչ թէ յօգուտ, այլ ի վնաս այն կիսաբարբարոս պետութեան, որ ջախջախվեց Կումանովօյում և Լիւլէ-Բուրգասում: Եւ դրա համեմատ, այլ եւս ոչ մի խօսք չը պէտք է լինի րէֆօրմները Թիւրքերի ձեռքով իրագործելու մասին. այդ գործը, լօգիքական անհրաժեշտութեամբ, պէտք է յանձնվի եւրոպացիների ձեռքը:

---

*) Տես «Մշակ» № 119.

# ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

### ՍԵՐԲ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԳԺՏՈՒԹԻՒՆ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
1 և 2 յունիսի

Բէլգրադ. — Մեծ պետութիւնների ներկայացուցիչները յայտնեցին մինիստր-նախագահին, որ իրանց կառավարութիւնները փոխադարձ համաձայնութեամբ վճռեցին ցանկութիւն յայտնել Սերբիային և Բօլգարիային, որպէսզի դաշնակիցների վէճը կանօնաւորվի խաղաղութեամբ և որպէսզի այդ նպատակով երկու տէրութիւնները ձեռնարկեն զինաթափութեան: Պաշիչը պատասխանեց, որ Սերբիան՝ հետամուտ խաղաղ միջոցներից օգտվելու՝ արդէն Բօլգարիային ներկայացրել է մի նօտա, որով յոյս է յայտնված, թէ Բօլգարիան անյապաղ կը դադարեցնէ զօրքի կենտրոնացնելը սերբիական սահմանագլխում, և որով առաջարկված է, որպէսզի երկու զօրքերը միաժամանակ կրճատվեն քառորդով. մեծ պետութիւնների ներկայացուցիչները յայտարարութիւնը ընդունեցին ի տեղեկութիւն:

Սկուպչչինայի նիստերը յետաձգվեցին մինչև յունիսի 17-ը:

—

Վիէննա.—Խօսելով սլաւօնական հարցի մասին, «Րէյխ-Պօստը» խիստ դարձուածքներով հնարաւոր է գտնում, որ կարելի է ապագայում Ռուսաստանը միջամտէ Աւստրո-Ունգարիայի ներքին քաղաքականութեամբ: «Նէյէ-Ֆրէյէ-Պրէսէն» այն կարծիքի է, թէ ռուսական բարեկամութեան հողի վրա Ռուսաստանը ձեռք կը ձգէ սերբիական և բօլգարական զօրքերը. սլաւօնական հարցի ետեւում թաքնված է Ռուսաստանի նուաճողական քաղաքականութիւնը: «Ցէյտը» գուշակում է, որ բալկանեան դաշնակցութիւնը կը վերականգնվի, Աւստրո-Ունգարիան կը շրջապատվի անքակտելի թշնամական շղթայով հիւսիսում և հարաւ-արեւելքում: Ռուսաստանը Բալկաններում կը հասնէ աջողութեան այնպիսի հետեւողականութեամբ, որ յիշեցնում է Բիսմարկի քաղաքականութիւնը:

—

Վիէննա.—«Նէյէս-Վինէր Տագէբլատը» հաղորդում է, որ քանի Սերբիան անմիջական դիմումն ուղղեց Բօլգարիային զինաթափութեան առիթով, Աւստրո-Ունգարիայի ներկայացուցիչները ցուցմունք ստացան այսուհետև ցնոր կարգադրութիւն չը մասնակցել այն հաւաքական քայլին, որ մեծ պետութիւնները պատրաստվում էին անել զինաթափութեան վերաբերութեամբ:

### ԿԱՅՍԵՐԻ ՀԵՌԱԳՐԻ ԱՌԻԹՈՎ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
1 և 2 յունիսի

Պարիզ.—«Տանը» ասում է. «Ըստ էութեան ու ըստ ձեւի կայսրի հեռագիրը միանգամայն համապատասխանում է քաղաքական դրութեան պահանջներին։ Ռուսաստանի սլաւոնական դերի գաղափարը պահում է իր ամբողջ ոյժը։ Յանուն դրա՝ Կայսրը զսպում է այն ձեռքը, որ պատրաստ է հարուածել։ Այդ միջամտութեան համար պէտք է ուրախանալ Եւրոպայի, Ռուսաստանի և նրա դաշնակիցների շահերի տեսակէտից։ Հեռագիրը բալկանեան պետութիւններին դրեց պատմական պատասխանատուութեան առաջ։

Սոֆիա.—Դանէվի կուսակցութեան օրգանը, «Բուլգարիա», քննելով Կայսրի հեռագիրը, ասում է. «Հեռագիրը պարզ ցոյց է տալիս, որ Ռուսական Միապետը պահանջում է վերականգնել պայմանագրերով սահմանված յարաբերութիւնները ամբողջովին։ Սերբ զօրքերը անպայման հեռանալու են վիճելի նուաճված երկիրներից»։

Ամբողջ մամուլը համակարծիք է դրան։

«Միր» ասում է. «Թագաւոր Կայսրի միջնորդ դատարանը սերբ-բոլգարական պայմանագրով որոշված սահմաններում հանդիսանում է միակ արժանաւոր ու պատուաւոր միջոցը խաղաղութիւնը ապահովելու համար։ Սերբիայի պահանջած զինաթափմանը՝ Բոլգարիան կարող է համաձայնել միայն երաշխաւորութիւն ստանալով, թէ նրա անվիճելի իրաւունքները կը ստանան բաւարարութիւն։ Այդ տեսակ երաշխաւորութիւն կը լինի այն, որ Սերբիական քաշէ իր զօրքերը անվիճելի գծից»։

Պրագա.—Չեխական լրագիրները ցնծութեամբ ողջունում են Կայսրի հեռագիրը յանուն բալկանեան միապետների, ուրախանալով որ սլաւոնների գործը դարձեալ գտնում է Ռուսաստանում յուսալի հովանաւորող։

Բերլին.—«Նորդ-Դոյտշէ-Ալգ. Ցայտունգը», քննելով Բալկաններում տիրող դրութիւնը, գրում է. «Եւրոպական խաղաղ քաղաքականութեան կողմից երախտագիտութեան արժանի Ցարի քայլին միացաւ մեծ պետութիւնների դիմումը Թիւրքիային և բալկանեան դաշնակիցներին։ Դատելով մի քանի նշաններից, այդ դիմումը հասել է իր նպատակին, հէնց որ Բոլգարիան և Սերբիան չը համաձայնեն զինաթափ լինելուն, այն ժամանակ կարելի կը լինի խօսել, որպէսզի մեծ պետութիւնները հաւաքական քայլով հանդէս գան տակաւին վիճելի հարցերի խաղաղ ու վերջնական լուծման համար»։

Բուդապեշտ.—Սոցիալ-դեմօկրատիական օրգան «Նէպշավան» կշտամբում է աւստրիական դիպլօմատիային, հակառակ Ռուսաց Ցարի ցանկութեան, բալկանեան խաղաղութեանը խոչընդոտ հանդիսանալու մտադրութեան մէջ։

Բէլգրադ.—Կայսրի հեռագրի առիթով «Սամոուպրավա» գրում է. «Կայսրը իրան իրաւունք է վերապահում լուծել սերբ-բոլգարական պայմանագրի վիճելի հարցերը, ելակէտ ունենալով համասլաւօնական եղբայրական տեսակէտը։ Այդ հանգամանքը յոյս է ներշնչում, թէ սերբ ժողովրդի արդարացի ակնկալութիւնները բաւարարութիւն կը գտնեն։ Դաշնակիցներին մնում է խորապէս հաւատալ այդ իրողութեանը և այն հիմք ծառայեցնել բալկանեան դաշնակիցների յարաբերութիւնների աճող զարգացման համար։ Կայսրի հեռագիրը, համակված մեծահոգի զգացմունքներով ու վեհ մտքերով, հանդիսանում է կարևոր փաստաթուղթ, որ սլաւօնականութեան պատմութեան մէջ ստեղծում է համասլաւօնական համերաշխութեան նոր դարագլուխ»։ Վերջում լրագիրը ասում է. «Մենք սրտանց ողջունում ենք Կայսրի հեռագիրը»։

Ի հերքումն արտասահմանեան մամուլի լուրերի՝ սերբիական հեռ. գործ. յայտարարում է, որ Սերբիան միշտ էլ կորրեկտ է եղել և այդպէս էլ կը մնայ դաշնակիցների և հարևանների վերաբերութեամբ։

Սերբիական հեռ. գործ. յայտնում է, որ բոլգարական իշխանութիւնները բոլգարաբնակ սերբ հպատակներին ենթարկում են ճնշումների։

Սոֆիա.—Ֆերդինանդ Թագաւորը ի պատասխանի Կայսրի հեռագրի ուղարկեց այսպիսի հեռագիր.

«Ես ստացայ այն հեռագիրը, որով Ձերդ Մեծութիւնը յանուն սլաւօնականութեան ու իբրև խաղաղութեան մասին հոգատար դիմում է անմիջապէս ինձ այն ծանր ճգնաժամի առիթով, որ մթագնում է մեր յարաբերութիւնները դէպի մեր դաշնակիցները, և որ, դժբաղդաբար, արդասիք է բացառապէս վերջինների վարմունքի։ Իմ պարտականութիւնն է ճշմարտութիւնը յայտնել, յիշեցնել Ձերդ Մեծութեանը, որ իմ կառավարութիւնը, խորապէս ներշնչված իր պարտականութեան գիտակցութեամբ, արդէն ընդառաջել է Ձերդ Մեծութեան արտայայտած զգացմունքներին։ Արդարև, դեռ ապրիլի 13-ին նա դիմեց պարոն Սազօնովին խնդրելով վերջ դնել սերբ-բոլգարական սահմանի երկու կողմում տիրող յուզմունքին, հրաւիրելով երկուստեք հնազանդվել դաշնակցութեան պայմանագրով նախատեսված միջնորդ դատարանին։ Հազիւ էր այդօրինակ հրաւէր առաջարկվել, երբ իմ կառավարութիւնը իսկոյն և եթ ընդունեց այն։ Իսկ ինչ վերաբերում է սերբիական կառավարութեան, նա շարունակեց վարել մի քաղաքականութիւն, որի վերջին արտայայտութիւնը եղաւ սկուպշչինայում կարդացված Պաշիչի դեկլարացիան, որ իմ երկրում գործեց առաւել մեծ յուզմունք, որովհետև կարդացվեց այն րոպէին, երբ դաշնակից պետութիւնների պրեմիեր-մինիստրների տեսակցութիւն էր պատրաստվում։ Այդ պատճառով, Ձերդ Մեծութիւն, մի մերժէք ընդունել, որ Բոլգարիան հաւատարիմ մնաց իր խօսքին և այժմ սպասում է, որ հետևելով Բոլգարիայի օրինակին՝ Սերբիան էլ իր հերթին համաձայնի միջնորդ դատարանի։ Ձերդ Մեծութիւնը թող բարեհաճի ընդունել, որ իսկապէս սերբ կառավարութիւնը այդ դատարանից խուսափելով ու Բոլգարիային թշնամական մի շարք ցոյցերով շարունակում է առաջ բերել եղբայրասպան պատերազմի վտանգ։

«Ես և իմ կառավարութիւնը աւելի, քան երբևիցէ, կողմանք այդ պատերազմը։ Մենք անկեղծօրէն ցանկանում ենք խուսափել նրանից, սակայն անկարող ենք դիմադրել այն միաբան զայրոյթի զգացմունքներին, որ ստեղծվել է իմ բովանդակ ժողովրդի մէջ և անասելի զոհաբերութիւններից յետոյ զրկել նրան իր յաղթութեան պտուղներից՝ հակառակ իրաւունքի և տրված երդումի։ Բոլգարիան ոչ միայն իրաւունքներ ունի Բոլգարիայի վերաբերութեամբ, այլ և որոշ պարտականութիւններ այն ազգաբնակութեան նկատմամբ, որ միշտ եղել է բոլգարական և որ կամենում է այդպիսին էլ մնալ ինչ էլ որ լինի։

«Եւ թող Ձերդ Մեծութիւնը յիշէ, որ այդ պարտականութիւնները շատ տարիների ընթացքում ընդունել է ինքը Ռուսաստանը»։

(Ծանօթ. Հ. Գ.—Այս հեռագիրը ուշացաւ)։

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

1 և 2 յունիսի

Պետերբուրգ.—Իտալական պատգամաւորութիւնը այցելեց Պետական Դուման իտալական դեսպանի առաջնորդութեամբ։ Պատուիրակներն ընդունվեցին բուռն ծափահարութեամբ ու «Կեցցէ Իտալիան» բացագանչութիւններով բոլոր անդամների կողմից, առանց կուսակցութեան խտրութեան։ Ներկայ գտնվելով վիճաբանութիւններին, հիւրերը մտան նախագահի առանձնասենեակը։ Ռօձեանկօն ճառեց ի պատիւ նրանց և բաժակ առաջարկեց Մեծ-Իտալիայի համար։ Նրան պատասխանեցին իտալական դեսպանը և պատգամաւորութեան պարագլուխ Րօսսին։ Իտալացի հիւրերը զմայլված էին ընդունելութիւնից և յայտնեցին, որ Դումա այցելելը Պետերբուրգում գտնվելու ամենափայլուն րոպէներից մէկն է։ Դումայից պատգամաւորներն այցելեցին Պ. Հ. Գ. և մանրամասն ծանօթացան Գործակալութեան աշխատանքի ընթացքի հետ, հետաքրքրվելով թէ ինչպէս են հեռագիրներ ուղարկվում Իտալիա։

Տեղեկատու բիւրօն լիազօրված է յայտնելու, որ ներքին գործերի մինիստրը մինիստրների խորհրդի մէջ ոչ մի յայտարարութիւն չէ արել և չէ առաջարկել արձակել Պետական Դուման, ինչպէս և ոչ մի կանխորոշ կարծիք չէ արտայայտել հինգերորդ Դումայի կազմի մասին։

Լոնդոն.—«Թայմս» ընդարձակ գովաբանական յօդուած է նուիրել Վիլհէլմ կայսրի յոբելեանին։

Բերլին.—Վիլհէլմ կայսրն ընդունեց թիւրքական դեսպանին, որ մատուցեց կայսրին յոբելեանի առիթով սուլթանի ընծաները։

Բոլգարական Թագաւորի քոյր պրինցուհի Բէյսի նախագահութեամբ կայացաւ համերգ՝ յօգուտ բոլգար այրիների և որբերի։ Հասոյթը հասաւ 10,000 մարկի։

Գերմանիայի քաղաքները կայսրի յոբելեանի առիթով բարեգործական նպատակներով յատկացրին 81 միլիոն մարկ։ Պրուսական լանդտագի անդամները յոբելեանի առիթով խնճոյք կազմեցին։

Բերլին.—Ամբողջ մամուլը ցնծագին ողջոյնի յօդուածներ է տպում կայսրի թագաւորութեան 25-ամեայ յոբելեանի առիթով, գովաբանում է նրա խաղաղասիրութիւնը, ընդգծում է, որ կայսրը իբրև անհատ շատ բարձր է կանգնած սովորական մարդկային մակերևոյթից։

Բերլին.—Րէյխստագի այսօրվայ նիստը նուիրվեց Վիլհէլմ կայսրի 25-ամեայ թագաւորութեան յոբելեանին։ Ներկայ էին պետական կանցլերը, բոլոր մինիստրները, դաշնակից խորհրդի անդամները։ Րէյխստագի նախագահը ճառ արտասանեց, գովաբանեց կայսրի խաղաղասիրութիւնը։

Րէյխստագի բիւջետային յանձնաժողովը ընդունեց այն օրինագիծը, որ հետամուտ է 240 միլիոն մարկի հասցնել դրամ կազմելու զինւորական անձեռնմխելի ֆոնդը ուժեղացնելու համար։

Հռոմ.—Պարլամենտը ընդունելով Լիվիայի պատերազմի ծախքերը ծածկելու համար առաջարկված 100 միլիոնի գումարայատկացումը՝ փակվեց։

Լոնդոն.—Սուֆրաժիստուհիների ղեկավարուհի Պանկէրստը նորից կալանաւորվեց, որովհետև կամեցաւ ներկայ լինել սուֆրաժիստուհի Դէվիսօնի թաղմանը։

Մադրիդ.—Պաշտօնապէս հրատարակվեց նոր կաբինէտի անդամների ցուցակը։

Պարլամենտի նիստերը յետաձգվեցին անորոշ ժամանակով։

Բարցելոնա.—Մարօկկօյում տիրող դրութեան պատճառով կառավարութիւնը զէնքի կանչեց վերջին պահեստի գնդերին։ Տէտուան ուղարկվեցին զօրքեր։

Սոֆիա.—Ֆերդինանդ Թագաւորը հրաժեշտի ունկնդրութեան ընդունեց Գէշովին և շնորհեց նրան ս. Կիրիլի և Մեթոդիոսի շքանշանը։ Գէշովը բոլգարական էկզարխից յետոյ միակ բոլգարն է, որ ստանում է այդ շքանշանը։

«Միր» ասում է. «Գէշովի հրաժարականը բողոք է դաշնակիցների անլոյեալ վարմունքի դէմ։ Նոր կաբինետի ծրագիրը բոլոր բոլգարական կուսակցութիւնների ծրագիր է և կայանում է անյետաձգելիօրէն կատարելու պարտականութիւնը Մակեդոնիայի վերաբերութեամբ։

Սկօպլէ.—Դուրացցոյից հաղորդում են, որ ալբանական կառավարութիւնը նիստեր է գումարում Վալօնում։ Տիրան, Տրոյա և Կավայա քաղաքները չեն ճանաչում նրան։ Ալէսիայում՝ բացի Տիրանից՝ մեծ շարժում է տեղի ունենում յօգուտ Էսադ-փաշայի։ Աւստրիական և իտալական ռազմանաւերը կանգնած են Դուրացցոյի նաւահանգստում։

Սոֆիա.—Կազմվեց նոր կաբինէտ. մինիստր-նախագահ և արտաքին գործերի մինիստր՝ Դանէվ, ներքին գործերի՝ Մաջարով, լուսաւորութեան՝ Պէյէս, ֆինանսների՝ Թէօդորով, արդարադատութեան՝ Աբրաշէվ, զինւորական գեներալ՝ Կովաչէվ, առևտրի՝ Բուրօվ, երկրագործութեան՝ Լիւդսկանով, հաս.-աշխատանքների՝ Եաբլանսկի, ճան. հաղորդակցութեան՝ Խրիստով։

Բոմբէյ.—Պալիտանա շրջանում՝ Բոմբէյից ոչ հեռու՝ ուժեղ հեղեղին զոհվեցին մօտ 300 մարդ։

Ալխուսէմաս.—«Րէյնա-Րեգենտէ» յածանաւը կրակ բացեց տեղացիների վրա, որոնք յափշտակել էին կործանված «Գեներալ Կօնչա» նաւը։ 19 տեղացի սպանվեցին. վիրաւորների թիւը մեծ է։

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՆՃԻՌՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

1 և 2 յունիսի

Կ. Պոլիս.—Շարունակ ձերբակալութիւններ են կատարվում։ Կալանաւորվել են Դամադ-Սալիհ-փաշան և Կ. Պոլսի նախկին պատգամաւոր Խայրէդդինը։ Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Մահմուդ-Շէվքէթ-փաշայի մարդասպաններին երևան հանեցին մի անգլիացու տանը։ Տունը շրջապատվեց զօրքերով։ Անձնատուր լինելու առաջարկութեանը մարդասպանները կրակեցին։ Հրդեհաշէջների խմբի օգնութեամբ ձերբակալվեցին երեք հոգի, որոնց թւում մի կապիտան։

Կ. Պոլիս.—Չը նայած բազմաթիւ ձերբակալութիւններին, ազգաբնակութեան մէջ յուզմունքը շարունակվում է։ Առևտուրը, տուժելով պատերազմից, աւելի ևս սահմանափակվել է։ «Մ. ու Ա.» կօմիտէտը, դաւադրութեան երևան հանելու պատճառով, ձգտում է ոչնչացնել իր բոլոր հակառակորդներին։ Մարդասպանների մեծամասնութիւնը չերքէզներ են։ Մահմուդ-Շէվքէթի սպանութիւնը բացատրվում է Նազըմ-փաշայի մահվան համար վրէժը լուծելով։ Նոր կաբինէտի մէջ կը մտնեն նաև ծայրայեղ ունիօնիստական տարրեր։ Լուրերի համաձայն, կաբինէտի մէջ մտնելու են Թալէաթ-բէյը և Ջէմալ-բէյը։ Զինւորական մինիստրութիւնը պաշտպանվում է զօրքերով։

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

1 և 2 յունիսի

Թէհրան.—Վերջին տեղեկութիւնների համաձայն, Սալար-ուդ-Դովլէն Թալիշեցիներին իր կողմը թեքելու անաջող փորձից յետոյ դիմեց դէպի Սեննէ։

Թէհրան.—Շահի կառավարութիւնը ստանում է չափազանց յուզիչ տեղեկութիւններ Լուրիստանից։ Թափառաշրջիկ ցեղերը շարժվում են դէպի հիւսիս, ճանապարհին քարուքանդ անելով հանդիպած գիւղերը։ Յուզմունք է նաև Քիրմանշահի նահանգում Սալար-ուդ-Դովլէի ագիտացիօն նամակների ազդեցութեան տակ։ Սալար-ուդ-Դովլէն խոստացել է շուտով այնտեղ հասնել։

Թաւրիզ.—Սալար-ուդ-Դովլէն, դիմելով Քիւրդստան, գիւղերով շրջապատվեց Գէլիւր գիւղում և հրացանաձգութեան ժամանակ վիրաւորվեց ձեռքից. գնդակը դուրս ելաւ։ Կարաւանը և փողերը ընկան Ջէրգամ-ուլ-Միւլքի ձեռքը։ Սալար-ուդ-Դովլէն օգտվելով մթութիւնից անյայտացաւ 12 մարդով և մայիսի 27-ին երևաց Կէզիլուզանի շրջակայքում։

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԳԱՅԻԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Ուրախութեամբ կարդացի «Մշակի» № 111-ում Գ. Զալխուշեանի յօդուածը «Դպրոցական ֆոնդ» վերնագրով։ Շատ ճիշդ է նկատում յօդուածի յարգելի հեղինակը, թէ լեզուն է, որ պահպանում է ազգը կորստից, իսկ լեզուի պահպանութեան համար հարկաւոր է դպրոց։ Եթէ մենք ուզում ենք ազգի գոյութիւնը և նրա լուսաւոր ապագան, պէտք է պահպանենք մեր ազգային դպրոցները. իսկ դպրոցները պահպանելու համար հարկաւոր է հիմնել ընդհանուր մեծ դպրոցական ֆոնդ։ Բայց, որովհետև ընդհանուր դպրոցական ֆոնդի գաղափարը մեծ չափով շուտով չէ կարող իրագործվել, իսկ կան դպրոցներ, որ այս րոպէիս մեծ կարիք ունեն օգնութեան, ինչպէս որ Գայիանեան դպրոցը, հետևաբար հարկաւոր է այդ՝ մեր լաւագոյն դպրոցներից մէկին հէնց այժմ առանց յետաձգելու օգնութեան հասնել։ Դպրոցը չափազանց անապահով դրութեան մէջ է. հազիւ պահպանում է իր գոյութիւնը։ Դպրոցի այդ աննախանձելի դրութիւնը սաստիկ վշտացնում է և ցաւ պատճառում ինձ՝ իբր նրա նախկին սանուհու։

Ես ուրախութեամբ յիշում եմ այն օրերը, երբ ինքս սովորում էի այդ դպրոցում։ Այդ օրերը Գայիանեան դպրոցի փայլուն ժամանակներն էին. մեր վարժուհիները և վարժապետները գաղափարական մարդիկ էին, շատերը նրանցից ծառայում էին ձրի, որովհետև սիրում էին և նուիրված էին այդ դպրոցին։

Եթէ շատերը այդ դպրոցի սանուհիներից մնացել են հոգով հայ, դա պարտական են Գայիանեան դպրոցին։ Այդ դպրոցը տուել է մեզ բացի լաւ մայրերից՝ շնորհալի վարժուհիներ և այլ գործիչներ։ Հարկաւոր է օգնել Գայիանեան դպրոցին, որի 50-ամեակը շուտով կը լրանայ։

Ես հաւատացած եմ, որ եթէ նախկին աշակերտուհիները և դպրոցին մօտիկ մարդիկ իրանց վրա վերցնէին այդ գեղեցիկ նախաձեռնութիւնը և ձեռք ձեռքի տուած աշխատէին, ընդհանուր ոյժերով կարող էին հաւաքել մի դրամագլուխ, որը կապահովացնէր դպրոցը, և այդպիսով մեծ գործ կատարած կը լինէին և դպրոցն էլ վտանգից կազատվէր։

Ցանկանք, որ այս շատերի սրտին մօտ միտքը շուտով իրագործվի։

Գայիանեան դպ. նախ. աշակերտուհի՝
Մարիամ Յարութիւնեան

## ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Շաբաթ, յունիսի 1-ին, երեկոյեան ժամը 8-ին կայացաւ Նորահաստատ Հայոց Դրամատիկական Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։

Ինչպէս յայտնի է, մինչև այժմ այդ Ընկերութիւնը գործում էր իբրև Թիֆլիսի Հայոց Դրամատիկական Ընկերութիւն, այսինքն նրա գործունէութեան շրջանը սահմանափակվում էր միայն Թիֆլիսով, սակայն այժմ, նոր հաստատված կանոնադրութեամբ, նա վերածվում է Հայոց Դրամատիկական Ընկերութեան և նրա գործունէութեան շրջանը տարածվելու է նաև գաւառների վրա։

Նախկին Ընկերութեան վարչութիւնը գումարել էր ներկայ ժողովը՝ լիկվիդացիայի ենթարկելու նախկինի գործերը և փոխանցելու նորին։ Ուստի այդ ժողովին մասնակցում էին թէ նախկին Ընկ. անդամները և թէ նոր Ընկերութեան անդամագրվածները, որով ժողովին մասնակցում էին 80-ից աւելի անդամներ։

Նախկին վարչութեան նախագահ Տիգրան Յովհաննիսեան, բանալով նիստը, առաջարկեց ընտրել ընդհանուր ժողովի նախագահ։

Ժողովը ընտրեց նախագահ Հ. Առաքելեանին։

Նախագահ Հ. Առաքելեան, շնորհակալութիւն յայտնելով ժողովին, ընդգծելով մի քանի խօսքով ներկայ ժողովի օրակարգը, յայտնեց, որ ժողովն ամենից առաջ մի տխուր պարտականութիւն ունի կատարելու։ Այս օրերս վախճանվել է Ամիրան Մանգինեան, հայ բեմի սիրող վետերաններից մէկը, հայ բեմի արդիւնաւէտ գործիչներից և մշակներից մէկը. ուստի առաջարկում է յարգել հանգուցեալի յիշատակը յոտնկայս։

Ժողովը ոտքի կանգնելով յարգանք է մատուցանում հանգուցեալի յիշատակին։

Ապա նախագահը դիմում է օրակարգի խնդիրներին։

I. Վարչութեան զեկուցումը եւ հաշիւը 1912/13 թատերաշրջանի գործունէութեան մասին.—Վարչութեան անդամ Ա. Նազարէթեան կարդում է վարչութեան գործունէութեան տեղեկագիրը, իսկ հաշիւները, տպված, բաժանվում են անդամներին։ Այդ տեղեկագրից երևում է, որ Ընկերութեան նիւթական դրութիւնը այժմ բարգաւաճում է, որ բոլոր անձեռնմխելի և յատուկ գումարները, որոնք առաջ, միջոցների սղութեան և զանազան անակնկալ պատահարների պատճառով, ծախսված էին, վերականգնված են։

Ապա կարդացվում է վերստուգիչ յանձնաժողովի զեկուցումը, որը յայտնում է, թէ հաշիւները գտնվում են կանոնաւոր։

Նախագահը առաջարկում է ժողովականներին յայտնել իրանց նկատողութիւնները, եթէ ունեն։

Կ. Շիրինեան յայտնում է, թէ վարչութիւնը չունի այնքան պատրաստի դրամ, որ իր յիշատակած անձեռնմխելի և յատուկ գումարները առանձնացնէ և պահէ իբրև առանձին գումարներ։ Վարչութեան անդամները պատասխանում են, թէ կայ պատրաստի գումարը։

Ժողովը հաստատում է 1912/13 թատերաշրջանի հաշիւները։

II. Զեկուցումն մրցանակաբաշխ. յանձնաժողովի.—Պիէսները գնահատող ժիւրիի անդամները պէտք է զեկուցանէին, թէ որ աշխատութիւններն են արժանացել մրցանակի, սակայն յայտնվեց, որ այդ մասին գրաւոր զեկուցումն չը կայ։ Ժիւրիի կողմից Յ. Մալխասեան և դերասան Արմէնեան յայտնեցին, որ դեռ չեն պատրաստել գրաւոր զեկուցումն, այլ կարող են այսօր բանաւոր համառօտ զեկուցումն տալ, որ և կատարեց Յ. Մալխասեանը և որից երևաց, որ անցեալ տարի մրցանակի արժանացել է Շանթի «Հին Աստուածներ» պիէսան։ Ժողովը, յանձնարարելով բերել իրան ապագայում գրաւոր զեկուցումն, անցաւ օրակարգի միւս խնդրին։

III. Տեղեկագիր Ընկերութեան 11-ամեայ գործունէութեան.—Այս տեղեկագիրը սակայն չէր պատրաստված։ Վարչութեան նախագահ Տ. Յովհաննիսեան յայտնեց, որ կարող է վերջին քառամեայ գործունէութեան մասին մի համառօտ զեկուցումն տալ, որ և կատարեց, նկարագրելով այդ շրջանի գործունէութիւնը իր ընդհանուր գծերով։

Նախագահ Հ. Առաքելեան յայտնեց, թէ նախկին Ընկերութեան լիկվիդացիայի վերաբերեալ խնդիրների քննութիւնը սպառված լինելով՝ այժմ ժողովը պէտք է անցնի նոր Ընկերութեան կազմակերպութեան։ Սակայն նախքան այդ առարկային անցնելը՝ նա կարծում է, որ ժողովի ցանկութեան ընդառաջ գնացած կը լինի, եթէ առաջարկէ շնորհակալութիւն արտայայտել իր պաշտօնավարութիւնը լրացրած վարչութեան և մանաւանդ նրա նախագահ Տ. Յովհաննիսեանին, որ, ինչպէս գիտենք, թողնում է Թիֆլիսը և տեղափոխվում Բագու։ «Ինչպէս ամեն մի անհատ,—կցեց Հ. Առաքելեան,—գործում է սխալներ, նոյնպէս և ամեն մի կօլլեգիալ հաստատութիւն զերծ չէ մնում սխալներից. բայց մենք պէտք է դատենք այդ հաստատութիւնը իր ընդհանուր գործունէութեան արդիւնքով, այլ ոչ մասնաւոր սխալներով. այդ գործունէութիւնն օգտակար է եղել և արդիւնաւէտ, ուստի առաջարկում եմ շնորհակալութիւն յայտնել վարչութեանը և նրա նախագահին»։

Ժողովը ծափահարութիւններով ընդունում է այս առաջարկը։

Հետևեալ խնդիրները, որոնցով ժողովը պէտք է անցնէր նոր Ընկերութեան կազմակերպութեան, դերասան Սևումեանի զեկուցումն էր «հայ թատրոնի ցանկալի բարեփոխութիւնների մասին» և նոր խորհրդի կազմի ընտրութիւնը։

Նախագահը յայտնում է, որ խօսքը տալիս է դերասան Սեւումեանին, և խնդրում է ժողովին լսել նրա զեկուցումը։ Սակայն ժողովականներից ոմանք—պ. պ. Ջաքար, Շիրինեան, Ա. Առաքելեան, Շիրվանզադէ—յայտնում են, որ աւելորդ են գտնում այդ զեկուցումը, քանի որ վարչութիւնը, ինչպէս երևում է, չէ մտել նրա քննութեան մէջ և չէ բերել ժողովին իր եզրակացութիւնները, աւելի նպատակայարմար է յանձնել այդ զեկուցումը նոր ընտրելի խորհրդի քննութեան։ Ծագում են թէր և դէմ վիճաբանութիւններ։ Ի վերջոյ ժողովը որոշում է լսել Սեւումեանի զեկուցումը։

Սեւումեան կարդում է իր զեկուցումը, որի ընթերցումը տեւում է կէս ժամից աւելի։

Այդ զեկուցումը, որ թատրոնական գործի և նրա զարգացման նպաստաւորող ու խոչընդոտ եղող պայմանների մի լուրջ ուսումնասիրութեան արդիւնք է երևում, առաջարկում է զանազան բարեփոխութիւններ, որոնք, զեկուցանողի կարծիքով, անհրաժեշտ են հայ բեմը իր կոչման բարձրութեան վրա պահելու համար։

Ժողովը թէև այդ հետաքրքրական զեկուցումը լսեց լարված ուշադրութեամբ, բայց որոշեց չը մտնել նրա քննութեան մէջ և թողեց, որ ապագայ խորհուրդը նախ տպագրէ այդ զեկուցումը և ուղարկէ անդամներին, այնուհետ քննութեան առնէ և իր եզրակացութիւններով հանդերձ բերէ յաջորդ ընդհանուր ժողովին։

Պարզ տեսնվում էր, որ ժողովը շտապում էր հարցերի քննութիւնը շուտով վերջացնել, ընտրութիւններին անցնելու համար։

Անցնելով ընտրութիւններին և յորդոր կարդալով ժողովականներին, որ սրանք գիտակցաբար ու բարեխղճօրէն վերաբերվեն ընտրութիւններին, և ընտրեն խորհուրդ՝ բաղկացած այնպիսի անձերից, որոնք ունեն և սէր, և հմտութիւն թատրոնական գործի, և ժամանակ՝ նուիրվելու այդ գործին, նախագահը յայտարարեց 5 րոպէ ընդմիջում մաքերի փոխանակութիւն կատարելու։

Ինչպէս երևաց, ընտրութիւնների համար կազմվել էին երկու պայքարող խմբեր։ Առաջին խումբն այն է, որ բաղկացած է գլխաւորապէս Ժողովրդական Տան հայկական սեկցիայի գործիչներից և սիրողներից և որոնց վրա Դրամատիկական Ընկ. վերջին վարչութիւնն միշտ յենվել է մեծամասնութիւն ունենալու համար։ Երկրորդ խումբը կազմվել էր նոր, այն նպատակով՝ որ հայ բեմը և թատրոնի գործը առողջ հիմունքների վրա դնելու համար անհրաժեշտ է, որ նրա ղեկավարութիւնը յանձնվի փորձված, բարձր կրթութեան և իմացականութեան տէր ու ժողովրդի մէջ համարումն ունեցող անձանց, որպէսզի նա չը դառնայ մի բուռն անձանց կամ նեղ կուսակցական անձանց գործունէութեան ասպարէզ։ Ահա այդ խումբը իբրև նոր խորհրդի անդամութեան կանդիդատներ կազմել էր հետևեալ ցուցակը՝ տ. Վ. Մամուլեան, Շիրվանզադէ, Հ. Առաքելեան, Յարութիւն Զմշկեան (երդւ.-հաւ.), Յովսէփ Ղորղանեան (երդւ.-հաւ.), Գ. Ծուբինեան (բանկային գործիչ), Պօղոս Դոլուխանեան (երդւ.-հաւ.), Ս. Քափանակեան (ուս. գրական. Ներս. դպրոցի) և Կ. Շիրինեան։ Բացի դրանցից, որոշվել էր ընտրել և պ. պ. Լ. Մանթաշեանին և Ալ. Խատիսեանին, որոնք թէև անկարող են մասնակցել խորհրդի նիստերին, բայց նրանց անդամակցութիւնը անհրաժեշտ է այլ նկատումներով։ Հակառակ խումբը, այն է՝ հայկական սեկցիայի անդամներից բաղկացած խումբը, ունէր իր առանձին ցուցակը, որի մէջ մտել էին և վերոյիշեալ ցուցակից մի քանիսը։

Եւ ահա այդ երկու ցուցակների կանդիդատները առաջարկվեցին բաց կերպով և նրանց վրա կատարվեց գաղտնի քուէարկութիւն։ Սակայն քուէարկութեան դիմելուց առաջ, ժողովականների առաջարկի համաձայն, պ. պ. Ալ. Խատիսեան և Լ. Մանթաշեան ընտրվեցին միաձայն, առանց քուէարկութեան։ Առաջարկված կանդիդատներից ոմանք—Ն. Աբէլեան, Յ. Ալոնեան, Ս. Քափանակեան, Կ. Շիրինեան, Գ. Մելիք-Ղարագեօզեան, Յ. Սպէնդիարեան և այլք—հրաժարվեցին դնել իրանց տոմսերը։

Գաղտնի քուէարկութեամբ և մեծամասնութեամբ խորհրդի անդամներ ընտրվեցին՝ տ. Վ. Մամուլեան, պ. պ. Գարեգին Երիցեան, Գ. Ծուբինեան, Արամ Նազարբէկեան և Յար. Զմշկեան, որով պ. պ. Լ. Մանթաշեանի և Ալ. Խատիսեանի հետ միասին ընտրվեցին 7 հոգի, մինչ պէտք էր ընտրել և 3 փոխ-անդամ։ Սրանց ընտրութիւնը ժողովը յետաձգեց յաջորդ անգամին։

Ապա ժողովը բաց քուէարկութեամբ ընտրեց հետևեալ անձերին իբրև մրցանակաբաշխ յանձնաժողովի անդամներ. պ. պ. Ալ. Քալանթար, Յ. Սպէնդիարեան, Ն. Աբէլեան, Մինաս Բերբերեան, Յ. Մալխասեան, Ան. Եզեկեան, Հ. Յովհաննիսեան և փոխանդամներ՝ Արմէնեան և Ն. Աղբալեան։

Տ. Յովհաննիսեանի առաջարկով, ժողովը շնորհակալութիւն յայտնեց նախագահ Հ. Առաքելեանին, որից յետոյ սա յայտարարեց ժողովը փակված գիշերվայ ժ. 12-ին։

## ՄՈՂՆՈՒ ԵՐԷՑՓՈԽԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, յունիսի 2-ին, կայացաւ Մողնու ծխականների ընդհանուր ժողովը, որ գումարված էր նոր երէցփոխ ընտրելու, ի տեղի հրաժարված երէցփոխ գեներալ Բ. Գալստեանի։

Աւագ քահ. տէր-Սիմէօն Զմշկեանը, բանալով ժողովը, որին մասնակցում էին 26 ծխականներ, յայտնեց, որ ժողովը երկրորդը լինելով օրինական է, ուստի և առաջարկում է ընտրել նախագահ և քարտուղար։

Ժողովը միաձայն նախագահ է ընտրում Հ. Առաքելեանին և քարտուղար՝ Սահակ ա. ք. Սահակեանին։

Նախագահը հարց է դնում ժողովի առաջ, թէ արդեօք ժողովը բարւոք չի համարի յետաձգել ընտրութիւնը մինչև սեպտեմբեր, որպէսզի կարելի լինի ծխականների աւելի մեծ թւի մասնակցութեամբ կատարել ընտրութիւնը, քանի որ երէցփոխը միևնոյն ժամանակ անդամ է և ծխական հոգաբարձութեան, որ կառավարում է Գայեանեան օրիորդաց միջնակարգ դպրոցը։

Թէր և դէմ կարծիքներ լսելուց յետոյ, նախագահը քուէարկութեան է ենթարկում հարցը։ Ժողովը որոշում է ձայների մեծամասնութեամբ չը յետաձգել ընտրութիւնը և կատարել այժմ իսկ։

Նախագահը առաջարկում է ցոյց տալ կանդիդատներ։ Իբրև միակ կանդիդատ առաջարկվում է Օրբելի Օրբելեանը։ Գաղտնի քուէարկութեամբ 22 ձայնով, ընդդէմ 3 ձեռնպահի և 1 սևի, երէցփոխ է ընտրվում Օրբելի Օրբելեանը։

Ժողովը, ըստ առաջարկութեան Ս. Մելքումեանի, շնորհակալութիւն է յայտնում նախկին երէցփոխ Բ. Գալստեանին իր օգտակար և բարեխիղճ գործունէութեան համար։

Նիստը, որ սկսվել էր ժամը 12-ին, փակվում է 2-ին։

## ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆՔ

Վերջապէս հայ ուսուցչի ապահովութեան հարցը ստացաւ գործնական լուծում։ Կ. Հ. Բ. Ը. խորհուրդը պէտք է ընտրէ մի յանձնաժողով, որը պէտք է զբաղվի ուսուցիչներին կենսաթոշակ տալու գործով։ Այսուհետև մեր կարիքաւոր, երկար տարիներ ծառայած ուսուցիչները կարող են դիմել այդ յանձնաժողովին և օգնութիւն խնդրել։ Նպաստը կը տրվի թէ միանուագ և թէ որոշ թոշակ տարեկան։

Ճիշդ է, սկզբում հնարաւորութիւն կը լինի բաւարարութիւն տալ մօտ 20 ուսուցիչների, սակայն ժամանակի ընթացքում գործը կը զարգանայ, նիւթական միջոցները կը շատանան, և շատերին կարելի կը լինի ապահովել։

Ահա մի սրբազան և համակրելի գործ։ Մեր բարերարները, հարուստները թող այսուհետև իրանց կտակներում բաժին յատկացնեն ուսուցչական ֆօնդին։ Բարեգործութիւնը գովելի է, բայց ապրուստ տալ զառամեալ ուսուցիչներին, որոնք իրանց երիտասարդութիւնը մաշել են մատաղ սերունդի դաստիարակութեան համար, դա ամենանուիրական և սուրբ գործ է։

Մեր ուսուցիչները պարտաւոր են իրանք ևս ջերմ մասնակցութիւն ունենալ այս հարցում և ամեն կերպ աշխատել, որ գործը առաջ գնայ. իսկ սրա համար անհրաժեշտ է, որ Էջմիածնի ուսումնարանական յանձնաժողովը կարգադրէ, որ այսուհետև ծխական դպրոցների ուսուցիչները իրանց ռոճիկից որոշ տոկոս (պետական դպրոցներում 6% է) յատկացնեն ուսուցչական թոշակարկղին։

Գործը սկսված է։ Մաղթում ենք յարատեւութիւն և առաջադիմութիւն։ Ողջունում ենք։

Յ. ք. Գրիգորեան

Ցարսկիէ-Կոլօդցի

## ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 75-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Հաճելի սկզբնաւորութեամբ է սկսում Ղարաբաղի հոգևոր դպրոցի իր 75-ամեայ յոբելեանը։ Թեմի առաջնորդ Զաւէն վարդապետի անդուլ ջանքերը պսակվեցին աջողութեամբ. հեռագիրը յայտնեց, որ ղարաբաղցի հարուստ Բաղդասար Արզումանեանը 200,000 ր. է նուիրաբերել թեմական դպրոցին։ Վերջապէս այս չարքաշ կեանքի անօրինակ դիմացկունութիւն ցոյց տուող հաստատութիւնը հնարաւորութիւն կունենայ մի փոքր շունչ քաշելու։

Ի՞նչ դժբաղդութիւնների ասես չի հանդիպել նա. ինչ դժուարութիւններ, լաց ու արիւնի օրեր ասես նրա գլխով անց չեն կացել։ Եւ նա համբերելով տարել է իր ծանր լուծը, մանուկներ է կրթել, մարդիկ է մատակարարել ժողովրդին, իբրև սիրող մայր խնամել, փայփայել է դժբաղդ ժողովրդի անտէր զաւակներին։

Արժէ մի քանի համառօտ տեղեկութիւններ տալ այդ հիմնարկութեան մասին, որի 75-ամեակը հանդիսաւորապէս տօնվելու է օգոստոսին։

Դպրոցը հիմնել է թեմի ժամանակի առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտը 1838 թ. Նիւթական մեծ նեղութիւններ կրելով դպրոցը առաջնորդի և կօնսիստօրիայի անմիջական հսկողութեամբ կառավարվել է մինչև 1860 թ.։ Դասատուներից ոմանք 1—2 տարի ձրի են աւանդել առարկաները. աւանդվել է այն ժամանակներում ի միջի այլոց և պարսից լեզուն։ 1860 թ. Մատթէոս կաթողիկոսը Ներսիսեան դպրոցի օրինակով Շուշի քաղաքից և թեմի ժողովրդից ընտրված հոգաբարձութիւն է հաստատել, որը և աշխատել է դպրոցը ապահովել նիւթապէս, մասնաւոր անհատներից նուիրաբերութիւններ հանգանակելով։

Դպրոցն եղել է չորսդասեան մինչև 1888 թիւը, այնուհետև բացվել են Ե. և Զ. դասարանները և այդպէս էլ մնում է մինչև այժմ։

Դպրոցն ունեցել է ականաւոր տեսուչներ և դասատուներ. յիշենք մի քանիսը. Պետրոս Շանշեան, Խորէն Ստեփանէ, Համբարձում Առաքելեան, Պերճ Պռօշեան, Ղազարոս Աղայեան, Մովսէս Սամուէլեան, Լեոն Սարգսեան, Սեդրակ Մանդինեան և այլն։

Զ. դասարան բացվելուց յետոյ, դպրոցի ընթացաւարտներն են եղել 1889 թւից սկսած մինչև 1912 թ. 148 հոգի։

—

Աւարտողներից շատերը հոգևորական կոչումն են ընդունել, մեծ մասը հայ դպրոցներում ուսուցչութիւն է անում, կամ նաև ռուսական և արտասահմանեան համալսարանները գնացողներ։

Յոյս ունենք, որ եթէ իր նեղ պայմանների մէջ դպրոցը այսքան ծառայութիւն է մատուցել, աւելի ևս կը բարգաւաճէ ու արդիւնաւոր կը դառնայ, երբ արդէն ապահովվել է նա։ Անշուշտ մնացած հայ ղարաբաղցի հարուստներն էլ բարի նախանձով վառված կաշխատեն դպրոցի ներքինը՝ գրադարանը, ֆիզիքական կաբինետը, նստարանները և այլ յարմարութիւնները կանոնաւորել և իրանց խաւար հայրենիքի գիտութեան օջախի կրակը բորբոքել։

Pessimist

(«Լոյս» № 22)

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Անցեալ շաբաթում Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկովի առողջական դրութեան մէջ զգացվեց բարելաւում։ Կոմսը երբեմն զով օդ է ծծում ծովի ափին Բաթումում։

◆ Այս շաբաթվայ ընթացքում Պետերբուրգում, սենատոր Նիկոլսկիի նախագահութեամբ կըսկսվեն այն մասնաժողովի նիստերը, որ պաշտօն ունի քննել Անդրկովկասի խոդանական յարաբերութիւնները դադարեցնող օրինագիծը։ Կովկասի փոխարքայի ներկայացուցիչ վերոյիշեալ խորհրդակցութեանը լինելու է Կովկասի դիւանապետ Պետէրսօնը, իսկ արդարադատութեան մինիստրութեան ներկայացուցիչ Թիֆլիսի նախկին նահանգապետ Լօզինա-Լօզինսկին։

◆ Վրաստանի էկզարխ Իննօկէնտի արքեպիսկոպոսը Բարձրագոյն հրամանով կանչվում է Պետերբուրգ՝ ներկայ լինելու ռուսաց սինօդում։ Էկզարխը մտադիր է մեկնել յունիսի 10-ին։

◆ Կովկասի փոխարքայի տրամադրութեան տակ է դրված բարձր պատշաճ իշխանութիւնից 30,000 հազար ռուբլի, հակաժանտախտային ձեռնարկութիւնների համար։

◆ Թիֆլիս վերադարձաւ Ալ. Քալանթարը, որը գնացել էր Ալէքսանդրօպօլ, Էջմիածին, Երևան և Ախալքալաքի գաւառը։ Մենք կը տանք տեղեկութիւն այդ ճանապարհորդութեան մի քանի դէպքերի մասին։

◆ Երկրագործութեան և պետական կալուածների վարչութիւնը հաստատել է Սաքարում բացվելիք գործնական այգեգործութեան և գինեգործութեան դպրոցի կանոնադրութիւնը։ Դպրոցի կուրսը եռամեայ է։ Դպրոցում կընդունվեն բոլոր դասակարգերի տղամարդ ոչ պակաս 15 տարեկանից. գերադասութիւն կը տրվի կովկասցիներին։ Աշակերտների թիւը լինելու է 20—25, ամենն էլ գիշերօթիկ։ Դպրոցում կը դասաւանդվեն այգեգործութիւն, գինեգործութիւն, բանջարաբուծութիւն, մրգապահութիւն, շերամապահութիւն, կողովների հիւսելը, հիւսնութիւն և այլն։ Աւարտողները պարտաւոր են ծառայել այնտեղ, որտեղ կը նշանակէ երկրագործութեան մինիստրութիւնը այնքան ժամանակ, որքան ժամանակ նրանք սովորել են դպրոցում։ Դպրոցի համար կառավարութիւնը տարեկան յատկացնում է 2300 ր., մնացածը պէտք է լրացնեն տեղական միջոցներով։

◆ Թիֆլիսի կանանց բարձր դասընթացքի վարչութիւնը հին փիլիսոփայութեան դասաւանդման համար հրաւիրել է Մօսկվայի համալսարանի պրօֆ. Պարխօմէնկօյին, իսկ գերմաներէնի աւանդման համար—Գանին։

◆ Պետերբուրգի եկեղ. խորհուրդը 1000 ր. է տրամադրել Վանի Երամեան դպրոցի դեֆիցիտը փակելու նպատակով։ Այդ ուսումնարանի դեֆիցիտը անցնում է 400 օսմ. ոսկուց։

◆ Քաղաքային սանիտարական հոգաբարձուներին առաջարկված է շոգերի պատճառով մերթ ընդ մերթ մտնել հասարակական ակումբները և հետևել այնտեղի բուֆէտների սանիտարական պայմաններին։

◆ Այսօր լոյս չը տեսան ռուսաց օրաթերթերը երէկվայ տօնի պատճառով։

◆ Այսօր նշանակված է Կայսերական Կովկ. Բժշկ. Ընկ. հերթական նիստը, ուր կը լինեն գիտական զեկուցումներ զանազան հիւանդութիւնների մասին։ Նիստը հրապարակային է։

◆ Թիֆլիսի խուզարկու ոստիկանութեանը այս օրերս աջողվեց, մի քանի օրվայ հետապնդումից յետոյ, կալանաւորել վեց վրացիների, որոնք քանիցս սպառնական նամակներ էին ուղարկել Պետերբուրգի վաճառական Ի. Գրինբէրգին, պահանջելով վճարել «յօգուտ անիշխանական խմբակի» ոչ պակաս, ոչ աւել 25,000 ռուբլի։ Գործին մասնակից էր Գրինբէրգի թիկնապահ իշխ. Դ. Նիժարաձէն, որը միւսների թւում առնված է հսկողութեան տակ։

◆ Տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ մի քանի ձայնաւորներ Բաքւում մինչև օրս ոչ մի նիստի չեն յաճախել։

◆ Թոքախտի դէմ Մաքառող Կովկասեան Ընկերութիւնը ստացել է Վլադիկավկազից, Երևանից, Կաղզւանից և այլ տեղերից այն գումարները, որոնք հանգանակվեցին յիշեալ տեղերում Սպիտակ Ծաղկի օրը յօգուտ Աբասթումանի սանատօրիայի կառուցման։

◆ Օդագնաց Քէբուրօվի թռիչքը կիրակի օրը չը կայացաւ։

◆ Յունիսի 1-ից Թիֆլիսի կենտրոնական պօստային գրասենեակում, անցեալ տարվայ նման, աշխատանքները սկսվում են առաւօտեան ժամը 8-ից և տեւում մինչև ցերեկվայ ժամը 1-ը։

◆ Բաթում մեկնեց Թիֆլիսի նահ. ազն. պարագլուխ իշխան Աբխազին։

◆ Բաքւում ևս բացվելու է երեխաների հիւանդանոց։

◆ Մեզ խնդրում են յայտնել, որ «Շարժում» թերթը, որ լոյս է տեսնելու Երևանում, կը հրատարակվի ոչ թէ յունիսի 10-ից, ինչպէս նախապէս հաղորդված էր, այլ առաջիկայ հոկտեմբեր ամսի 22-ից։

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

*Իմ պատասխանը պ. Գր. Վարդանեանին*

Թիֆլիս, 3 յունիսի

Տեղական թերթերից մէկում դուք դիմել էք ինձ մի բաց նամակով և խնդրել յայտնել, թէ արդեօք ես ձե՞զ ևս կասկածում կամ մեղադրում եմ «Հայրիկեան ֆօնդը մաքրազարդողներից», քանի որ ես դատարանում միայն բժ. Զարգարեանի մասին եմ յայտնել, թէ նա չէ պատկանում այդ անձանց կամ մասնաժողովի կազմին։

Եթէ դուք, ինչպէս և բժ. Զարգարեանը և միւսները ոչ կրքից կուրացած, այլ սառնասրտօրէն կարդացած լինէիք իմ յօդուածները «Յետաձգե՞լ թէ ոչ», վերնագրով տպված «Մշակի» մի քանի համարներում, ձեր մատի փաթաթան չը շինէիք միայն այդ յօդուածներից մէկի մի պարբերութիւնը, դուք կը խոստովանէիք, որ «Հայրիկեան ֆօնդի մաքրազարդողների» ակնարկը չէր պատկանում ոչ բժ. Զարգարեանին, ոչ ես ձեզ և Լէօին, որովհետև ամենքը գիտեն, գիտեմ ես և ուրիշները, որ «Հայրիկեան ֆօնդի» մասնաժողովի անդամները այլ մարդիկ են, որոնց ամենին մենք լաւ ճանաչում ենք, ինչպէս ճանաչում էք և դուք։ Ես ձեզ պախարակել եմ ձեր այն վարմունքի համար, որ դուք, իբրև ուսուցիչ, ցոյց տուիք յօբելեանական և դպրոցական ֆօնդի հարցերի մէջ, իսկ ակնարկը Հայրիկեան ֆօնդի մաքրազարդման մասին ձեզ չէ պատկանում։

Հ. Առաքելեան

—

Ախալցխա, 19 մայիսի

Հայկական տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի յոբելեանները քաղաքումս տօնելու համար, անցեալ փետրվար ամսում, տեղական Դր. Սիրողների Ընկ. վարչութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցան մի քանի խառն նախապատրաստական ժողովներ, որտեղ բացի Դրամատիկականից մասնակցում էին Կ. Հ. Բ. Ընկ. տեղական ճիւղը, Հայ Կանանց Բարեգ. Ընկ. վարչութիւնները, երկսեռ դպրոցների հոգաբարձուները, վիճակիս փոխանորդը, մի քանի ուսուցիչներ և այլ անձինք։

Միայն հայոց դպրոցների ուսուցչ. խումբերն էին, որ մերժել էին մասնակցելու այս համազգային տօնին և ուսուցիչներից մասնակցեցին մի քանիսը միայն ազատ կամքով։ Մշակելով տօնակատարութեան ծրագիրը, յիշեալ խառն ժողովը իր միջից ընտրեց մի գործադիր մարմին 9 հոգուց բաղկացած այդ յոբելեանը գլուխ բերելու համար նշանակված օրին։

Սակայն նշանակված օրը հանդէսը տեղի չունեցաւ մեզ անյայտ պատճառով. լսեցինք, որ գործադիր մարմինը ինքնագլուխ յետաձգել էր։

Ամենայն իրաւամբ սպասում էինք, որ նրանք այդ յետաձգման պատճառների մասին նախօրօք իրանց ընտրող խառն ժողովին տեղեկութիւն տային. սակայն ի զուր։ Գործադիր մարմինը ինքն իրան տէր ու տնօրէն ենթադրելով, այլ ևս չէր ճանաչում իրան ընտրող մարմիններին և ինքնիշխան ինչ որ ուզում՝ կարգադրում ու որոշում էր, և այսպէս. գաղտագողի, ապրիլի 28-ին, Կարապետեան դպրոցում կատարվում է այդ համազգային տօնը, առանց նախապէս տեղեկացնելու իրան ընտրողներին, որոնցից շատերը այդ օրը հանդիսատանը նստած են եղել։ Այդ մասին մենք պատահմամբ լսեցինք և շատ զարմացանք, թէ սա ինչ խաղ է։ Ինչի՞ն վերագրենք այս վարմունքը. նրանց տգիտութեա՞նը թէ եսականութեանը, որը առիթ է տուել իրանց ընտրողների մեծամասնութեան դժգոհութեան ու հիասթափման։ Դեռ մի կողմ թողնենք, թէ այդ հանդէսը որքան անգոյն է անցել շնորհիւ մեր գործադիր մարմնի թուլութեան. բայց միթէ այդ ամենատարրական պարտականութիւնը նրանք չէին հասկանում, միթէ չէին ըմբռնում, որ իրանց ընտրողների ծրագրից շեղել նրանց ոչ ոք լիազօրութիւն չէր տուած։ Ցաւալի է։

Խառն ժողովի անդամ՝

Լևոն Հէքէքեան

Թաւրիզ, 20 մայիսի

Ատրպատականի հայկական տարազները կազմելով Թիֆլիսի Հայոց Ազգագրական Ընկերութեան թանգարանին նուիրելու համար՝ շնորհակալութեամբ ստացել ենք զգեստների մասեր կազմող իրեր տ. տ. Նունէ Մովսիսեանից 1 կտոր, Մաշինկա Շահնազարեանից 4, Թառլան Նազարբէկեանից 1, Նունէ Աֆթանդիլեանից 1, Բալասան Մահտեսի-Սարգսեանից 3, Բալասան Բժշկեանից 2, Ովսաննա Հանսաջանեանից 3, Եաղութ Յովակիմեանից 1, Զաբէլ Պաստագրեանից 1, Սանդուխտ Յովսէփբէկեանից 1, Մանիա Գրիգորեանից 1 զոյգ կօշիկ, Գայիանէ Վարդանեանից 1 զոյգ կօշիկ, Հեղինէ Ժօրժ 2 կտոր իրեր և 100 դրամ։ Օր. օր. Խ. և Հեղինէ Ստեփանեաններից 5 կտոր, Զաբէլ Սագինեանից 14 զոյգ արծաթէ կոճակ, տիկ. Պէատրիս Սարաճեանից 50 դրամ, պ. պ. Եփրեմ Պօղոսեանից 30 դրամ, Սեննքերիմ Տէր-Յակոբեանից 30 դրամ։

Հեղինէ Ժօրժ

—

Բօրժօմ, 14 մայիսի

«Հօրիզօնի» № 70-ում Արտանուճի ծխ. դպրոցի նոր-ուսուցիչ պ. Ան. Սահակեանը իր թղթակցութեան մէջ գրում է, որ այնտեղ՝ Արտանուճում վերջին երեք տարիներս ոչ մի ներկայացում չէ տրված և որ, վերջապէս, երեք տարուց յետոյ աջողվեց ոգի և եռանդ ներշնչելով գործի հրաւիրել թմրած գործիչներին և փետրվարի 20-ին խաղացվեց «Էլի մէկ զոհ» եւայլն։

Վերջին երեք տարվայ ընթացքում նուաստս լինելով Արտանուճում նոյն դպրոցի աւ.-ուսուցչի պաշտօնով՝ իմ երեք ընկեր-ուսուցիչների հետ, որոնք ներկայումս նոյնպէս բացակայ են այնտեղից, յայտնում եմ, որ հակառակ «Հօրիզօնի» թղթակից ուս. Սահակեանի գրածին, այդ ժամանակաշրջանում յօգուտ նոյն դպրոցի և նոր բացվելիք գր.-ընթերցարանի տրվել են մի քանի ներկայացումներ ուսուցչական խմբի ղեկավարութեամբ, որոնցից մի երկուսի փորձերը նոյնիսկ իմ բնակարանումս են կատարվել։ Ներկայացվածների թւումն էին, որքան յիշում եմ, «Պատւի համար», «Մարվող ճրագներ», «Ոճրագործի ընտանիքը» պիէսները։

Իսկ թէ ինչու համար ներկայ ուսուցիչ Սահակեանը իր նախորդների օրով կատարվածն իսպառ ուրանում, եղածը չեղած է հրատարակում, այդ մեզ համար հանելուկ է։

Ուս. Յ. Քօսեան

Յ. Գ.—Սոյն նամակը վաղուց ուղարկված է եղել «Հօրիզօնին», սակայն հակառակ մեր սպասածին՝ խմբագրութիւնը չը կամեցաւ ճշմարտութիւնը վերականգնել։

Յ. Ք.

—

Դիլիջան, 15 մայիսի

Ներկայ տարվայ «Մշակի» № 3-ում Դիլիջանի ծխ. դպրոցում տրված փորձնական դասերի մասին տեղեկութիւն տալով, ես ի միջի այլոց մասնակիցներից մէկին «քաւոր հոգաբարձու» անուանելով՝ կողմնակալութիւն էի վերագրել նրան, իսկ միւսին «տհաս վարիչ» անուանելով՝ անհեռատեսութիւն և անբարշտութիւն էի վերագրել։

Միւս դիտողութիւններս իրանց ոյժի մէջ պահելով հանդերձ, այս երկու անձերին վերաբերեալ տողերը, ցաւում եմ, թիւրիմացութեան արդիւնք են եղել։

Ա. Կոծինեան

—

Բաքու, 25 մայիսի

Ալէքսանդրօպօլում երբեմն հրատարակվող «Ձայն» շաբաթաթերթի և այժմ Երևանում հրատարակվող «Կռան» շաբաթաթերթի մէջ՝ Ա. Զանեան ստորագրութեամբ մի պարոն յօդուածներ է գրում։ Թիւրիմացութիւնների տեղիք չը տալու համար, թող տուէք ձեր լրագրի միջոցով խնդրել այդ պարոնին, որ կամ իր անուն ու ազգանունն ամբողջապէս ստորագրի, կամ թէ չէ՝ հօր անունից որևէ տառ աւելացնի, եթէ չէ ցանկանում ուրիշ ազգանուն ընտրել, քանի որ այդ անունով գրականութեան մէջ արդէն աշխատող կայ։

Ա. Զանեան

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Բացի Կ. Պօլսի պաշտպանութեան համար 100,000 զինուորից կազմված ազգային պահակախմբից, գերմանացիք յորդորում են մեծաքանակ թիւրքական զօրքեր կենտրոնացնել գլխաւորաբար կովկասեան ռուս սահմանին մօտիկ։

◆ Գերմանիայում պատուիրված ռազմամթերքների արժէքը Թիւրքիային արժեց 60 միլիոն ֆրանկ։ Հերթական «ապրանքը» մեծ շոգենաւերով արդէն ուղարկվում են ըստ պատկանելոյն։

◆ Աւստրիան պաշտօնապէս երաշխաւորեց Բօլգարիային, որ Սերբիայի առաջին իսկ աջողութեան դէպքում կը միջամտէ յօգուտ Բօլգարիայի։

◆ Սօֆիայումն են արդէն արտասահմանեան խոշոր օրաթերթերի թղթակիցները։

◆ Թագաւոր Կայսրի հեռագիրը Բօլգարիայում առաջ բերեց մեծ դժգոհութիւն։ Լրագիրներում երևացին վիրաւորական յօդուածներ Ռուսաստանի հասցէին։ «Բաւական է,—ասում են լրագիրներից մի քանիսը,—որ մենք Ռուսաստանին զոհաբերեցինք Ռօդօստօն և Սիլիստրիան...»։

◆ Աւստրիան ամեն կերպ աշխատում է խոչընդոտ լինել ռուսական միջնորդութեանը սերբ-բօլգարական վէճի մէջ, երկիւղ կրելով ռուսական ազդեցութեան ուժեղանալուց սլաւօնների աչքում։

◆ Ռուսաց մինիստրների խորհուրդը, լսելով Սազօնօվի զեկուցումը արտաքին վտանգաւոր դրութեան մասին, վճռեց պահանջել Բօլգարիայից արձակել պատերազմելու կոչած իր զօրքերը։

✦ Վերջին հեռագիրը հաղորդում է, որ թէ Բօլգարիան և թէ Սերբիան ճարահատեալ համաձայնեցին զինաթափ լինել և իրանց բաղդի տնօրինութիւնը թողնել Ռուսաստանին։

✦ Պօստային հաղորդակցութիւնը Սերբիայի և Բօլգարիայի միջև վերջնականապէս խզված է։

✦ Մակեդոնիայի 26 միութիւնները բոլոր երկիրների պարլամենտներին և մամուլին մի յուշագիր ուղարկեցին՝ Մակեդոնիան Բօլգարիային միացնելու մասին։

✦ Լուրերի համաձայն, Աւստրիան գնում է $1^1/_4$ միլիօնով այն դիրիժաբլը, որով Ցէպպէլինը հասաւ Վիէննա։

✦ Ներկայումս սերբիական սահմանագլխում դիրքեր են գրաւել Ջաթալջայի և Ադրիանուպօլսի մօտ գործող բօլգարական թնդանօթաձիգ գնդերը։

✦ Թիւրքիայում սպասվող նոր յեղաշրջումը ի նկատի ունենալով, ի թիւս միւս մեծ պետութիւնների՝ Ռուսաստանը ևս Կ. Պօլսի իր դեսպանատանը պատուիրագրեց կտրուկ միջոցներ ձեռք առնել քրիստոնեաների պաշտպանութեան համար։

✦ Կ.Պօլսից հեռագրում են. «Տեղեկութիւն ստանալով, որ Պէրայի մի փողոցում թագնվել է Զիա-Պերտէֆը, ոստիկանութիւնը զօրքերի հետ շրջապատեց տունը։ Զիա-Պերտէֆը սկսեց կրակել և վիրաւորեց զինուորական նահանգապետի ադիւտանտին և քննիչ Սամուէլին։ Զօրքերը ներս խուժեցին տունը, բայց Զիա-Պերտէֆն այնտեղ չէր»։

✦ Մահմուդ - Շէվքէթ - փաշային սպանողները Կ. Պօլսում անձնատուր եղան, երբ այլ ևս գնդակ չունէին կրակելու իրանց թագստեան տեղից։ Նրանցից մինը՝ կապիտան Քեազըմ-բէյն է, իսկ միւսը պօրուչիկ Ալի-բէյը։ Հաղորդում են, որ երրորդ մարդասպանը անյայտացել է։ Ինչպէս պարզվում է, սպանութիւնը կազմակերպել էին Աբդիւլ-Համիդի կողմնակիցները։

✦ Կ. Պօլսում երիտասարդ-թիւրքերը տնային բանտարկութեան են ենթարկել սուլթան Մահմէդ V-ին։

✦ Ռումինիան իր պատերազմական պատրաստութիւնները ընդարձակ չափերով առաջ է տանում։

✦ Սերբ-յունական դաշնագրի ստորագրութիւնը իրողութիւն է։

✦ Աբդիւլ-Համիդը երիտասարդ-թիւրքերից խնդրեց թոյլ տալ տեսնըվել իր զաւակների հետ։

✦ Կօկօվցէվը մեկնեց Ցարսկօէ Սէլօ՝ զեկուցանելու այն միջոցների մասին, որոնք մինիստրները անհրաժեշտ են գտնում գործադրել Պետական Դումայում իրանց պատիւը աջակողմեանների և ձախակողմեանների սուր վիրաւորանքներից պաշտպանելու համար։ Մինչև այդ միջոցների գործադրութիւնը՝ մինիստրները վճռել են ոտք չը դնել Պետական Դումա, իսկ հերթական գործերի առիթով նրանք ուղարկելու են իրանց օգնականներին։

✦ Պետերբուրգում խօսում են, որ Կօկօվցէվի հրաժարականը ընդունված է սկզբունքով, որ կը լինի բալկանեան ներկայ ճգնաժամի հարթվելուց յետոյ միայն։ Կօկօվցէվի պաշտօնի համար տրվում են Կրիվօշէինի, Շչէգլօվիտօվի, Ռուխլօվի, Մօսկվայի նահ. պարագլուխ Սամարինի անունները։

✦ Մօսկվայի յայտնի բարեգործ Շախօվը 10,000 ր. նուիրեց ուսանող կանանց փոխադարձ օգնութեան ընկերութեանը։

✦ Յայտնի օդագնաց Ուտօչկինը խելագարվել է։

✦ Յայտնի գործարանատէր Կրուպպը մերժեց ռուս էկսկուրսանտներին դիտել իր թնդանօթային գործարանը։

✦ Պետերբուրգի գործարաններում տեղի են ունենում միտինգներ բանուորական մամուլի դէմ սկսված ուժեղ հալածանքի առիթով։

✦ Պետերբուրգի «Гроза» թերթը դադարեց ընդմիշտ՝ ամենօրեայ տուգանքները անկարող լինելով վճարել։

✦ Լօձում նահանգական դատարանը քննում է գործարանատէր Լամէտրին, որ մեղադրվում է 32 մանկահասակ աղջիկների առևանգելու մէջ։

✦ Գերմանիան խորհուրդ տուեց Բ. Դրան չը հրաւիրել եւրոպացի խորհրդատուներ քաղաքացիական բարենորոգումների համար։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

1 յունիսի

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ։ Փորձնական թնդանօթաձգութեան ժամանակ պայթումից սպանվեցին 3, ծանր վիրաւորվեցին 6, թեթև՝ 2 հոգի։

ԼԻՍԱԲՈՆ։ Օդագնաց Մանին ընկաւ և մահացաւ։

ԿԻՍԼՕՎՕԴՍԿ։ Բացվեց բժշկական սէզօնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական Դումայի նախագահի օգնական ընտրվեց 198 ձայնով ընդդէմ 83-ի կենտրօյի ներկայացուցիչ Լվօվ 1-ինը։ Քուէարկութեանը չը մասնակցեցին սօց.-դեմ. և աշխատաւորականները։

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ Առաւօտեան 25 վայրկեան երկրաշարժ զգացվեց։

ՕԴԵՍՍԱ։ Զգացվեց թոյլ երկրաշարժ։

ՄԱԴՐԻԴ։ Սուկէլարտի մօտերը սպանական հետախուզիչ զօրախումբը ենթարկվեց տեղացիների յարձակման և կորցրեց 2 օֆիցէր, մի ունտէր-օֆիցէր. վիրաւորվեցին մի ունտէր-օֆիցէր և 8 զինուոր։

2 յունիսի

ՍՕՖԻԱ։ Յունիսի 1-ին առ. ժ. 11 ու 33 ր. զգացվեց ուժեղ երկրաշարժ։ Ամբողջ Բօլգարիայում տեղի է ունեցել քայքայում։ Առանձնապէս վնասները զգալի են Տըրնօվօյում։ Լուրերին նայած, կան նաև մարդկային զոհեր։ Լրջօրէն վնասվել են եկեղեցիները և հասարակական շէնքերը։ Ազգաբնակութիւնը գիշերը բացօդեայ անցրեց։ Փուռերը քանդվել են։ Շրջակայ գիւղերում հաց է բաժանվում։ Այսօր առաւօտեան նորից զգացվեց թոյլ հարուած։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Հարաւային Ունգարիայի շատ տեղերում զգացվեց ուժեղ երկրաշարժ։

Կօշուտի, Իւստի կուսակցութիւնները, նաև անկուսակցականները և 1848 թ. կուսակցութեան պատգամաւորները որոշեցին կազմել մի կուսակցութիւն «Անկախութեան և 1848 թ. միացեալ կուսակցութիւն» անունով։ Նոր կուսակցութիւնը նախագահներ ընտրեց Կօշուտին և Իւստին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրաւվեցին «Правда», «Лучъ» և «Трудовой голосъ» օրաթերթերի համարները։

ՆՕՎՕՉԵՐԿԱՍԿ։ Առաջին անգամ Դօնի պօլիտեխնիկումից աւարտեցին 11 ինժեներներ, որոնք ուղարկեցին ամենահպատակ հեռագիր։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ։ Իմանի գաւառում գիւղացիք սպանեցին չորս խունխուզի. մնացած խունխուզները, գցելով հրացանները, փախան։

ՍԱՄԱՐԱ։ Բուգուրուսլանի գաւառում փոթորիկը ոչնչացրեց 5477, վնասեց 2846 դեսեատին ցանքսեր։ Վնասները աւելի քան 300,000 րուբլի են։

ՕԴԵՍՍԱ։ Թոքախտի դէմ Մաքառող Ընկերութիւնը Սպիտակ Ծաղկի օրը հանգանակած դրամով բացեց գեղեցիկ կահաւորված ձրի սանատօրիա 60 մահճակալով։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Դ-ր Անտօն Մէյէրին

Յայտնում եմ Ձեզ իմ խորին շնորհակալութիւնը «Սմօմօկսիդէնի» համար, որը ինձ քիչ օգնութիւն չը հասցրեց։
Դեղի ընդունելութիւնը աւարտելուց յետոյ նկատում եմ բարերար հետևանքներ, այն է՝ գլխացաւ, իբրև հետևանք կապութեան, անցել է, փքածութիւն այլևս չը կայ, կապութիւն նոյնպէս, ինքնազգացումս էլ շատ լաւ է։ Այդ դեղը արեան պակասութեան դէմ ևս շատ օգնեց։ Այդօրինակ օգուտը ի նկատի առնելով՝ համարձակ կարող եմ յանձնարարել նրան այն անձերին, որոնք տառապում են կապութիւնից։ Դ. Բահ, Բէլեւայէվ։ Բօլօբանօվա գ., Բօգօր. գաւ., Մօսկվ. նահ.
**Գովասանութիւնները չեն կրկնվում։ Ամեն օր—նոր։**
(П. 66973)

ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Սպերմին-Պէլիով օգտվող հիւանդներին աշխատում են խաբել մեծախօսած րէկլամներով սերմային երկաթից պատրաստված հեղուկների մասին, ըստ որում այդ րէկլամների մէջ անամօթաբար խեղաթիւրում են փաստերը և մատնացոյց են լինում եւրոպական գիտնականների անուան և աշխատութիւնների վրա, մինչդեռ այդ գիտնականները երբէք չեն տեսել այդ պրէպարատները։ Մենք մեր պարտքն ենք համարում նախազգուշացնել հիւանդներին այդ [illegible], որովհետև նրանք՝ չունենալով ոչ մի առնչութիւն Սպերմին-Պէլի հետ՝ շատ անգամ պարունակում են իրանց մէջ հակառողջական նիւթեր։

Նեվրաստենիայի, սեռական թուլութեան, զառամութեան, իստէրիկայի, նեվրալգիայի, սակաւարիւնութեան, բօրախտի, սիֆիլիսի, սնդիկային բժշկութեան հետեւանքների, սրտի հիւանդութիւնների (ճարպութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախումն, պէրէբօյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումի, ալկօհօլիզմի, ողնաշարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւններից առաջացած թուլութեան, յոգնածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ միայն Սպէրմին-Պէլի գործածութեամբ կարելի է հասնել այն փայլուն հետևանքներին, որոնց մասին վկայում են ամբողջ աշխարհի յայտնի գիտնականների և բժիշկների դիտողութիւնները։

Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել **ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ** անուան վրա և մերժել բոլոր [illegible] և հեղուկները զանազան անուններով, որոնց անպէտքութեան մասին հրատարակված է առանձին բրօշիւր, որն ուղարկվում է ձրի՝ Սպէրմինի մասին եղած նորագոյն գրականութեան հետ միասին։

ՍՊԷՐՄԻՆ ՊԷԼԻՆ ԿԱՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ ԵՒ ԴԵՂԱՎԱՃԱՌ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ։

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-ья
Поставщики Двора
ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА
С.-ПЕТЕРБУРГЪ.
(П. 69718) 12—4

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ
յայտնում է, որ յունիսի 9-ին, կիրակի, առաւօտեան ժամը 11-ին Ընկ. գրասենեակում
(Абасъ-Абадская пл. с. д. № 7.)
Նշանակված է Ընկ. դահլիճի վերանորոգութեան աճուրդը։
Պայմանները կարելի է կարդալ Ընկ. գրասենեակում։
463. 1—1

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Օ. Վ. ԴԷՎՕԿԱՑԱ-ԷՆԳԷԼ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեանց
1. 0—59

ԴՈԿՏՈՐ
Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՌԼԻՆՈՒՄ
Շարունակում է ընդունել ամեն տեսակ հիւանդների և խորհրդակցութիւններ է կազմում պրօֆեսօրների հետ։ **Նոր հասցէն՝** Berlin N. W. Luisenstr. 67. Telephon Amt. Norden. 92—74.
(Ե. Ա.) 412. 20—5

Извѣщаю
г. г. кліентовъ, что для ихъ удобства мною снято въ самомъ центрѣ города на Эриванской площ. уголъ Пушкинской и Армянскаго баз. № 2 при пом. Стр. О-ва «Волга» помѣщеніе для ПРІЕМА ОБЪЯВЛЕНІЙ, какъ для мѣстныхъ, такъ и для иногородныхъ газетъ и журналовъ утромъ съ 9 ч. до $3^1/_2$ ч. дня, веч. съ 5 ч. до $7^1/_2$ ч. веч. на условіяхъ съ разсрочкой платежа. Отъ нѣкоторыхъ газетъ имѣю исключительное право пріема объявленій. Тамъ же принимается переписка дѣловъ. бумагъ на пишущихъ машинахъ.
Справиться по телефону: 1) Ваке около Дворян. гимназіи, соб. д. тел. № 925. 2) Гост. Ветцеля, Мих. пр. тел. № 380.
Съ сов. почт. агентъ
М. А. ГАЖОНІА
(о. մ.) 464. 5—1

Ուսումնարանական կահկարասիներ
Մեծ քանակութեամբ աշակերտական նստարաններ և գրատախտակներ մաքուր կաղնու փայտից շինված. ծախվում են ամենաէժան գներով։ Հարցնել՝ Окоевская ул. № 23. 4 уч. մանրավաճառի խանութում։
452. 4—2

Վաճառվում են
„ԱՐՈՐ"
ամսագրի
1910, 1911 և 1912 թ.թ. լիակատար հաւաքածուները։
Իւրաքանչիւր տարվայ հաւաքածուն առանձին արժէ 3 րուբլի։ Նրանք, որոնք ցանկանում են երեք տարվայ համարները միասին ձեռք բերել, կարող են 8 ր. վճարելով ունենալ «ԱՐՕՐԻ» լիակատար հաւաքածուն։
Հասցէն.—Тифлисъ, редакція газ. «Мшакъ» կամ Tiflis, Rédaction du journal «Mschak».
(Ե. Ա.) 10—4

ՕԳՏՎԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ
Վաճառվում են Յ. Դաղբաշեանի բառարանների
ՎԵՐՋԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ
ՌՈՒՍ-ՀԱՅ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ գինը 8 ր., կազմած 9 ր.։
ՀԱՅ-ՌՈՒՍ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌ., գինը 6 ր. կազմած 6 ր. 50 կ.։ Երկու բառարանները միասին 12 ր.։ Ճանապարհածախսը հեղինակի վրա։ Դիմել՝ А. Дагбашяну. Коргановская ул. № 9. кв. 2 Въ г. Тифлисъ.
Ե. Հ. 383. 10—7

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրաւունքներով
Հաշւապահական Կուրսեր
ամառային պարապմունքներով
ՅՈՎՀ. ԶԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
Ընդունելութեան քննութիւնները մայիսի 30-ին և 31-ին։
I Թամամշեվսկայա փ. սեփ. տ. № 13 (առ. ժ. 9—2-ը)
Միխայլովսկի պր. № 53 (երեկ. ժ. 6—8-ը)։
Ե.Հ.Կ. 382. 10—10

ՄԱՆԳԼԻՍՈՒՄ
Պլեխարովկայա փողոցի վրա, անտառի գլխաց, տրվում է Ն. Ծատուրեանի ԱՄԱՐԱՆՈՑԸ—բաղկացած 6 սենեակից՝ ամեն յարմարութիւններով և սարք ու կարգով (պիանինօ)։ Պայմանների մասին տեղեկանալ Թիֆլիսում, Դվօրցովայա փողոցի վրա, Ն. Ծատուրեանի դէպօյում։
456. 4—2

Կովկ. Հայոց Հրատ. Ընկ.
Լոյս տեսաւ Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆ
«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ»
Հեղինակի պատկերով։ Գինն է 50 կօպէկ։
Դիմել՝ Тифлисъ. Кавказское Армянское Издательское Общество, Бебутовская ул. № 25, Թիֆլիսի և գաւառական գրախանութներին, Ընկ. ճիւղերին և աշխատակից անդամներին։
Ա. Օ. 442. 5—5

ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՈՒՍՈՒՑԻՉ
Հայոց լեզուի և առարկաների համար, որը պէտք է վարէ նաև եկեղեցական խմբապետի պաշտօն։ 26—28 դաս, վարձատրութիւնը 600 րուբլի։ Դիմել՝ Петровскъ. (Дагест. обл.) Армянскому церковно-приходскому Попечительству.
448. 4—4

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԵԽԱՆԵՐԸ
հաճոյքով ընդունում են ՍԿԱՎՈՒԼԻՆԸ, իբրև լուծողական դեղհատիկների ձևով, առանց համի և հոտի։ ՍԿԱՎՈՒԼԻՆԸ կատարելապէս համապատասխան է երեխաների քնքոյշ կազմուածքին՝ ներգործելով դիւրութեամբ և ախորժելի կերպով, չառաջացնելով ոչ աղիքների գրգռումն և ոչ էլ թանչոց։ ՍԿԱՎՈՒԼԻՆԸ օգտաւէտ է նոյնպէս և մեծերի համար, ինչպէս և փոքրերի համար։ Նա չէ հարկադրում փոխել սովորութիւնները և կեանքի ձևերը։ Կապութիւնը բուժում է։
ՍԿԱՎՈՒԼԻՆԸ
լուծողական է—
դեղհատիկներով
առանց համի և հոտի
(B. 34491)

SCAVULINE
A.GABLIN
23 Rue Ballu PARIS

Ներկայ յունիսի 8-ից Բագւում լոյս է տեսնելու ՍԻՄ. ՀՈՎՈՒԵԱՆԻ խմբագրութեամբ և ՍՄԲ. ԳԱՐԱԳԱՇԻ հրատ. երգիծաբանական-սատ. պատկերազարդ շաբաթաթերթ
„ԶՈՒՌՆԱ"
Մինչև 1-ն յունվարի (եօթ ամսվայ) բաժանորդագինն է Բագւի համար 2 ր. 50 կ., հատով՝ 10 կ., Բագւից դուրս Ռուսաստանի բոլոր քաղաքներում—3 ր., հատով՝ 12 կ.։ Յայտարարութիւնները ընդունվում են նաև օտար լեզուներով ամենայարմար գնով։ Օտար քաղաքներից խմբագրութեան հետ գործ ունեցողները իրանց թղթակցութիւնները և դրամական ծրարները հասցէագրում են՝ Баку, Бондарн. ул. № 127. Смбату Гарагашу.
458. 2—1

ОДОЛЬ
Безспорно
лучшее
полосканіе

(B. 179586/179604)
Օդոլը, ականաւոր գիտնականների միահամուռ կարծիքով, ներկայանում է իբրև ատամների ողողիչ, որը ներկայումս աւելի կատարելապէս համապատասխանում է ատամների առողջապահական պահանջներին։

Յայտարարում ենք
ի գիտութիւն մեր յարգելի գործակալների, որ տեխնիքական յարմարութիւնների պատճառով պահանջները (սօլիտերի) հասցէագրել՝ Тифлисъ, до востребованія Арутюну Ахназарову.
Հ.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный